ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 23.09.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ԳԲԽ-ԷՍ-2017/35

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև Խորհուրդ)՝ քննելով «Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից 07.09.2017թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. **«Ֆոտոն» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.**

«Ֆոտոն» ՍՊԸ-ն (այսուհետ՝ նաև Ընկերություն) ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին 07.09.2017թ. ներկայացրել է բողոք, որով հայտնել է հետևյալը.

«Արզականի համայնքապետարանի կողմից հայտարարված «ՀՀ ԿՄԱՀ ԳՀԱՊՁԲ 20/17» ծածկագրով ընթացակարգին «Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատող հանձնաժողովի քարտուղարը չի ընդունել, նշելով, որ հայտերն անհրաժեշտ է ներկայացնել մինչև 06.09.2017թ. ժամը 11:00-ը: Հրավերի հայտարարության մեջ նշված է, որ «հայտերի բացումը տեղի կունենա Արզականի համայնքապետարանի շենքում, 2017թ. սեպտեմբերի 6-ին, ժամը 12:00-ին, իսկ գնանշման հարցման հայտերն անհրաժեշտ է ներկայացնել Արզականի գյուղապետարան՝ Հ. Բաբաջանյան 8 հասցեով, թղթային ձևով, մինչև սույն հայտարարության հրապարակման օրվանից հաշված 7-րդ օրվա ժամը 11:00-ը:

«Ֆոտոն» ՍՊԸ-ն հայտը ներկայացրել է ժամը 11:15-ին, հիմք ընդունելով հայտերի բացման ժամը, որը ըստ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի, պետք է համընկնի հայտերի ընդունման վերջնաժամկետին»:

Որպես բողոքի իրավական հիմքեր՝ Ընկերությունը նշել է հետևյալը.

««Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 33-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը բացվում են հրավերում նշված օրը, ժամին և վայրում՝ հայտերի բացման նիստում: Հայտերի բացման օրը և ժամը պետք է համընկնեն դրանք ներկայացնելու վերջնաժամկետին: Փակ մրցույթի դեպքում հայտերը հրավեր ստացած բոլոր մասնակիցների գրավոր համաձայնության դեպքում կարող են բացվել մինչև հրավերում նշված ժամկետը լրանալու օրը:

Օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների բողոքարկման խորհրդի գործողությունները (անգործությունը) և որոշումները, իսկ 3-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի նույն օրենքի համաձայն՝

1) նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները գնումների բողոքարկման խորհրդին.

2) դատական կարգով բողոքարկելու գնումների բողոքարկման խորհրդի, պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ Խորհուրդը՝

1) իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման,

գ. փոփոխելու ընդունված որոշումները»:

Ընկերությունը Խորհրդին ներկայացված բողոքով խնդրել է.

1. Արգելել Պատվիրատուի և գնահատող հանձնաժողովին կատարելու որոշակի գործողություններ կամ ընդունելու որոշումներ սույն ընթացակարգի վերաբերյալ:

2. Պարտավորեցնել չեղյալ հայտարարել «ՀՀ ԿՄԱՀ ԱՊՁԲ 20/17» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը:

Խորհրդում բողոքի քննության նպատակով տեղի ունեցած նիստին մասնակցում էր «Ֆոտոն» ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչ Կարեն Գևորգյանը:

2. **<u>Արզականի համայնքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>**

Արզականի համայնքապետարանը (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 11.09.2017թ. թիվ Ն.Մ 05-372 գրությամբ «Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից 07.09.2017թ. Խորհրդին ներկայացված բողոքի վերաբերյալ հայտնել է, որ ՀՀ Կոտայքի մարզի Արզականի համայնքապետարանի կողմից հայտարարված «ՀՀ ԿՄԱՀ ԳՀԱՊՁԲ 20/17» ծածկագրով մրցույթի անցկացման և փաթեթների բացման գործընթացի հետ կապված կա որոշակի անհամապատասխանություն, սակայն գտնում է, որ բովանդակային առումով այն որևէ հետևանք չունի:

Պատվիրատուն խնդրել է Խորհրդին՝ հաշվի առնելով գույքի նկատմամբ հասարակության կողմից առանձնահատուկ և կարևոր պահանջը, մրցույթը չհամարել չկայացած և թույլ տալ շարունակել գնման գործընթացը:

Պատվիրատուն՝ պատշաճ ծանուցված լինելով Խորհրդում կայանալիք նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը նշված նիստերին:

3. **<u>ԳԲԽ-ԷՍ-2017/35 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.</u>**

Խորհուրդն ուսումնասիրել է «Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից 07.09.2017թ. Խորհրդին ներկայացված բողոքը և կից փաստաթղթերը, Բողոքի վերաբերյալ Պատվիրատուի 11.09.2017թ. թիվ Ն.Մ 05-372 գրությամբ ներկայացված դիրքորոշումը, «ՀՀ ԿՄԱՀ ԳՀԱՊՁԲ 20/17» ծածկագրով գնանշման հարցման հայտարարությունը (այսուհետ՝ նաև Հայտարարություն), «ՀՀ ԿՄԱՀ ԳՀԱՊՁԲ 20/17» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի գրանցամատյանը, «ՀՀ ԿՄԱՀ ԳՀԱՊՁԲ 20/17» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) կողմից Ընկերությանը 06.09.2017թ. տրված տեղեկանքը.

Արզականի համայնքապետարանի կողմից սեղանների և աթոռների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ԿՄԱՀ ԳՀԱՊՁԲ 20/17» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ՝ նաև Ընթացակարգ):

Ընթացակարգին 06.09.2017թ. ժամը 11:15-ին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Ֆոտոն» ՍՊԸ-ն:

Սակայն, Հանձնաժողովը չի ընդունել Ընկերության հայտը, և վերջինիս տրամադրել է տեղեկանք առ այն, որ «ՀՀ ԿՄԱՀ ԳՀԱՊՁԲ 20/17» ծածկագրով գնանշման հարցման հայտարարության համաձայն, հայտերը ընդունվում են մինչև 06.09.2017թ. ժամը 11:00-ը, իսկ հայտերի բացումը սահմանված է 06.09.2017թ. ժամը 12:00-ին, ուստի Ընկերության հայտը չի ընդունվում այն հիմնավորմամբ, որ հայտերի ընդունման վերջնաժամկետը լրացել է:

«Ֆոտոն» ՍՊԸ-ն Խորհրդին ներկայացրած բողոքով հայտնել է, որ Արզականի համայնքապետարանի կողմից հայտարարված «ՀՀ ԿՄԱՀ ԳՀԱՊՁԲ 20/17» ծածկագրով ընթացակարգի հայտարարությամբ նշված է, որ հայտերի բացումը տեղի կունենա 2017թ. սեպտեմբերի 6-ին, ժամը 12:00-ին, իսկ գնանշման հարցման հայտերն անհրաժեշտ է ներկայացնել Արզականի գյուղապետարան՝ մինչև նույն հայտարարության հրապարակման օրվանից հաշված 7-րդ օրվա ժամը 11:00-ը: Ոստի, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասը, համաձայն որի՝ հայտերի բացման օրը և ժամը պետք է համընկնեն դրանք ներկայացնելու վերջնաժամկետին՝ Ընկերությունն իր հայտը ներկայացրել է 06.09.2017թ. ժամը 11:15-ին, որը, սակայն, գնահատող հանձնաժողովը չի ընդունել՝ պատճառաբանելով, որ հայտերն անհրաժեշտ էր ներկայացնել մինչև 06.09.2017թ. ժամը 11:00-ը, ինչի մասին Ընկերությանը տրվել է համապատասխան տեղեկանք: Բողոքի քննության նպատակով 04.09.2017թ. տեղի ունեցած նիստի ժամանակ Ընկերության ներկայացուցիչը պնդեց 07.09.2017թ. Խորհրդին ներկայացված բողոքն ամբողջությամբ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 27-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետի համաձայն՝ գնումների հայտարարությունը պարունակում է հայտեր ներկայացնելու ձևի, տեղի և ժամկետի վերաբերյալ տեղեկություններ:

Օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը բացվում են հրավերում նշված օրը, ժամին և վայրում՝ հայտերի բացման նիստում: Հայտերի բացման օրը և ժամը պետք է համընկնեն դրանք ներկայացնելու վերջնաժամկետին:

Խորհուրդն արձանագրում է, որ Հանձնաժողովի կողմից 28.08.2017թ. հաստատված «ՀՀ ԿՄԱՀ ԳՀԱՊՁԲ 20/17» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտարարությամբ նշված հայտերի բացման օրը և ժամը չեն համընկնում հայտերը ներկայացնելու վերջնաժամկետին:

Խորհուրդն արձանագրում է նաև, որ Ընկերության կողմից Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտը ներկայացվել է մինչև Ընթացակարգի հայտարարությամբ հայտերի բացման համար սահմանված օրը և ժամը:

Խորհուրդը գտնում է, որ Հանձնաժողովը՝ «ՀՀ ԿՄԱՀ ԳՀԱՊՁԲ 20/17» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտարարությամբ հայտերի բացման օրը և ժամը սահմանելով 06.09.2017թ. ժամը 12:00-ն, իսկ հայտերի ներկայացման վերջնաժամկետը՝ 06.09.2017թ. ժամը 11:00-ն՝ խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից 07.09.2017թ. ներկայացրած բողոքը բավարարել մասնակի:
2. Պարտավորեցնել Հանձնաժողովին չեղյալ հայտարարել «ՀՀ ԿՄԱՀ ԱՊՁԲ 20/17» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ